



Կարգապահական գործ թիվ ԿԳ-20006

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի սեպտեմբերի 15-ի թիվ 101-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/77-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Տիգրան Խուրշուդյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Կարեն Սարգսյանի, Կարեն Մեժլումյան և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Անահիտ Ավագյանին (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) (արտոնագիր՝ թիվ 283), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Մելսիկ Քարամյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Դիմողը 2019թ. դիմել է փաստաբան Անահիտ Ավագյանին՝ Այգեզարդ համայնք, Գայի 7 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականաշնորհման հարցերով իրավաբանական ծառայություն ստանալու համար: Լսելով Դիմողին՝ Անահիտ Ավագյանը նրանից վերցրել է նրա փաստաթղթերը և պետք է մեկ շաբաթ անց հայտներ հոնորարի չափը:

Մեկ շաբաթ անց հանդիպելով Դիմողին՝ Անահիտ Ավագյանը որպես հոնորար պահանջել է 1,500,000 ՀՀ դրամ: Դիմողը հայտնել է, որ նման գումար չունի, և Անահիտ Ավագյանը հրաժարվել է իրեն ծառայություն մատուցելուց և խորհուրդ է տվել դիմել այլ փաստաբանի: Դիմողը դիմել է այլ փաստաբանի:

2020թ. հունվար ամսին Դիմողն ստացել է Անահիտ Ավագյանի դիրքորոշումն այն

հարցով, որով Դիմողը դիմել էր իրեն և հանդես է եկել որպես Դիմողի հակառակորդ կողմի փաստաբան՝ դիրքորոշման մեջ նշելով այնպիսի փաստեր, որոնք իմացել է Դիմողից վերջինիս խորհրդատվություն տրամադրելու ժամանակ: Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Անահիտ Ավագյանի վարքագիծը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 01.04.2020թ. թիվ 63-Ա/ԿԳ-20006 որոշմամբ փաստաբան Անահիտ Ավագյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 3.2.2, 3.2.3, 3.2.5 և 3.2.7 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

03.04.2020թ-ին Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Կարեն Քամայանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

07.09.2020 Պալատ մուտք է եղել Դիմող Մելսիկ Քարամյանի դիմումը, որով ըստ էության վերջինս հաստատել է նախկինում ներկայացրած դիրքորոշումը: Դիմումին կից ներկայացվել է նաև տեսագրություն, որտեղ երևում է, թե ինչպես են մուտք գործել փաստաբան Անահիտ Ավագյանի գրասենյակ և այնտեղից դուրս եկել:

15.09.2020 թվականի Խորհրդի նիստին ներկայացվել է դիմողը և վերջինիս ներկայացուցիչը՝ Նազիկ Ավագյանը: Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ Անահիտ Ավագյանը իրենց չի ուղղորդել հանրային պաշտպանի մոտ, ինչպես նաև նշել է, որ փաստաբանին տրամադրել են փաստաթղթերի պատճեններ:

Դիմողի ներկայացուցիչը նաև ընդունել է, որ հնարավոր է այդ փաստաթղթերը փաստաբանին տրամադրած լինի նաև իրենց հակառակորդ կողմը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

19.03.2020թ. Պալատ է մուտքագրվել (**մուտք՝ №-570-20**) Անահիտ Ավագյանի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը:

Դիմողը կնոջ հետ այցելել է Անահիտ Ավագյանի փաստաբանական գրասենյակ և տեղեկացրել է խնդրո առարկայի մասին: Փաստաբանը Դիմողի և նրա կնոջ բանավոր պատմածից հասկացել է, որ խոսքը վերաբերում է իրենց սեփականության իրավունքի ենթադրյալ խախտմանը:

Դիմողը հայտնել է, որ իր ընտանիքը սոցիալապես անապահով է, ունի համապատասխան փաստաթուղթ, որից հետո Անահիտ Ավագյանը Դիմողին խորհուրդ է տվել օգտվել հանրային պաշտպանի ծառայությունից՝ տրամադրելով հասցե և

հեռախոսահամար:

Դրանից հետո Անահիտ Ավագյանը Դիմողի և նրա կնոջ հետ շփում չի ունեցել և տեղյակ չի եղել նրանց հետագա գործողություններից:

2019թ. նոյեմբեր ամսին Անահիտ Ավագյանին դիմել են ՀՀ Արարատի մարզի Այգեզարդ համայնքի բնակիչներ, ամուսիններ Ռաֆիկ Քարամյանը և Անահիտ Պետրոսյանը՝ ներկայացնելով իրենց որդու՝ Դիմողի՝ ՀՀ վարչական դատարան մուտք եղած հայցադիմումի օրինակը, հայցադիմումը վարույթ ընդունելու, իրենց երրորդ անձ ներգրավելու և հայցի ապահովման մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումները:

Նշված անձանց և Անահիտ Ավագյանի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքվել է պայմանագիր, որով Անահիտ Ավագյանի հոնորար է սահմանվել 120,000 ՀՀ դրամը, և Անահիտ Ավագյանի կողմից իր վստահորդներին տրամադրվել է պայմանագրի մեկ օրինակը:

12.11.2019թ. Ռաֆիկ Քարամյանի և Անահիտ Պետրոսյանի կողմից Անահիտ Ավագյանին տրվել է հասարակ գրավոր ձևի լիազորագիր՝ ՀՀ վարչական դատարանում թիվ ՎԴ/7514/05/19 վարչական գործով ներկայացուցիչ հանդես գալու համար:

Անահիտ Ավագյանի կողմից դիրքորոշում է ներկայացվել իր վստահորդների կողմից ներկայացված փաստաթղթերի և ապացույցների հիման վրա:

Ըստ Անահիտ Ավագյանի՝ վիճելի սեփականությունը նաև Դիմողի ծնողների սեփականությունն է, և անհեթեթություն է պնդել, որ Դիմողը կարող էր այնպիսի փաստաթղթի կամ իրավիճակի տիրապետել, որին չէին կարող տիրապետել իր ծնողները:

Անահիտ Ավագյանը պնդել է, որ Դիմողի դիմումն իր նկատմամբ պարունակում է զրպարտություն:

Պատասխանողը ներկայացել է 28.07.2020թ. և 15.09.2020թ. Խորհրդի նիստերին և ըստ էության հաստատել է նախկինում ներակայացրած դիրքորոշումը, վերջինս հավելել է, որ բնօրինակ փաստաթղթերի հիման վրա է ներկայացրել իր դիրքորոշումը: Վերջինս նշել է նաև, որ իր օգտագործած փաստաթղթերը եղել են բնօրինակ և իրեն ներկայացվել են Դիմողի ծնողների կողմից:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 03.06.2020թ-ին կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ փաստաբան Անահիտ Ավագյանը ներկայացրել է առարկություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 08.06.2020թ.:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 28.07.2020թ. ժամը 18:30-ին և 15.09.2020թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

– Փաստաբանը անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել Դիմողին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի ներկայացրած դիմումով և փաստաբանի բացատրությամբ:*

– Փաստաբանը հրաժարվել է Դիմողի շահերը ներկայացնելուց: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի ներկայացրած դիմումով և փաստաբանի բացատրությամբ:*

– Փաստաբանը ներկայացրել է Դիմողի հակառակորդ կողմի շահերը ՀՀ վարչական դատարանում: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ վարչական դատարանին հասցեագրված դիրքորոշման պատճենով:*

– Փաստաբանը չի օգտագործել Դիմողի հայտնած և փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի ներկայացուցչի և փաստաբանի բացատրություններով:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Անահիտ Ավագյանը փաստաբան է հանդիսանում 01.12.1997թ., և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, չհաշված սույն կարգապահական գործը:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 01.04.2020թ. թիվ 63-Ա/ԿԳ-20006 որոշմամբ փաստաբան Անահիտ Ավագյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 3.2.5 կետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, եթե պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են

նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Կանոնագրքի 3.2.2 կետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում): Գրավոր համաձայնությունը համարվում է վավեր, եթե պարունակում է տեղեկություններ այն մասին, որ փաստաբանը վստահորդին տեղեկացրել է նման համաձայնություն տալու իրավական հետևանքների և հնարավոր ռիսկերի մասին: (...)

Կանոնագրքի 3.2.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ փաստաբանը վստահորդի գործը վերցրել է ուսումնասիրելու համար, որից հետո վստահորդի հետ համաձայնության չեն եկել ծառայություն մատուցելու հարցի կապակցությամբ, իսկ հետագայում փաստաբանին է դիմել այդ գործով հակառակորդ կողմը, ապա փաստաբանը պարտավոր է ղեկավարվել Կանոնագրքի 3.2.2 կետով:

Կանոնագրքի 3.2.4 կետի համաձայն՝ Կանոնագրքի 3.2.3 կետում նշված դեպքում, փաստաբանը կարող է վստահորդի գործը վերցնել, եթե պարզում է, որ՝

- նախորդ վստահորդի դերում հանդես եկած անձը դիտարկելիս է դիմել փաստաբանին, Կանոնագրքի 3.2.2 կետում նշված այդ գործով զբաղվելը բացառող հանգամանքներ ստեղծելու համար.

- նախորդ վստահորդը նույն կերպ դիմել է տվյալ գործի ոլորտում մասնագիտացում ունեցող այլ փաստաբանների՝ դիմելու պահին որևէ փաստաբանի հետ փաստացի համագործակցություն ունենալու պայմանում.

- **նախկին վստահորդը փաստաբանին չի հայտնել գաղտնի տեղեկություններ, իսկ հաղորդած տեղեկությունները հանրամատչելի են եղել.**

- **փաստաբանը իրավաբանական օգնություն ցույց չի տվել վստահորդին: Սույն ենթակետում նշված հնարավորությունը չի գործում, եթե փաստաբանը նախկին վստահորդից գործին ծանոթանալու համար հոնորար է ստացել:**

Տվյալ դեպքում Դիմողը փաստաբանին մեղադրում է նրանում, որ վերջինս Դիմողին խորհրդատվություն մատուցելու ժամանակ տվյալներ է իմացել վերջինիցս, այնուհետև այդ տվյալներն օգտագործել է իր դեմ, տվյալ գործով հակառակորդ կողմին ծառայություն մատուցելիս, սակայն միևնույն ժամանակ Դիմողը նույնիսկ չի հստակեցնում իր պնդումը և չի նշում թե մասնավորապես ինչ տվյալներ է վերջինս փոխանցել փաստաբանին, որը նա հետագայում օգտագործել է:

Ավելին, Դիմողի ներկայացուցիչը նաև ընդունել է, որ հնարավոր է այդ փաստաթղթերը փաստաբանին տրամադրած լինի նաև իրենց հակառակորդ կողմը:

Գործի փաստերով հաստատված է, որ Դիմողից գործի նյութերին ծանոթանալու համար գումար փաստաբանը չի պահանջել և փաստաբանի կողմից օգտագործված տեղեկությունները հիմնված են Դիմողի հակառակորդ կողմի կողմից իրեն ներկայացված բնօրինակ փաստաթղթերի վրա:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ Եթե բոլոր ապացույցների հետազոտումից

հեղուկ վիճակի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, արվյալ դեպքում Դիմողը:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարավել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պարշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Խորհուրդը գտնում է, որ տվյալ պարագայում առկա են Կանոնագրքի 3.2.4 կետով նախատեսված բացառություններից առնվազն երկուսը, քանի որ

- Դիմողը չհիմնավորեց և չապացուցեց փաստաբանին գաղտնի տեղեկատվություն հայտնելու փաստը.

- Կարգապահական վարույթի ընթացքում պարզ դարձավ, որ փաստաբանը Դիմողից գործին ծանոթանալու համար հոնորար չի ստացել:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ տվյալ պարագայում փաստաբանը չի ունեցել Դիմողի հակառակորդ կողմին իրավաբանական օգնություն ցույց չտալու պարտավորություն:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի մասնագիտական վարքագծի վերոնշյալ չափանիշների օբյեկտիվ և բազմակողմանի քննության համար ապացույցների անբավարարության բացասական հետևանքը պետք է կրի այդ ապացույցները ներկայացնելու պարտականություն ունեցող կողմը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում չհիմնավորվեցին իր կողմից վկայակոչած հանգամանքները, ուստի Խորհուրդը գտնում է, որ չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 6.1.1 ենթակետի պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 01.04.2020թ. թիվ 63-Ա ԿԳ-20006 որոշմամբ փաստաբան Անահիտ Ավագյանի (արտոնագիր՝ թիվ 283) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2, 3.2.3, 3.2.5 և 3.2.7 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Տիգրան Խուրշուդյան

**15 սեպտեմբերի 2020թ.
թիվ ԿԳ/77-Ա
ք. Երևան**